

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ. ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՂԻՐԵԶԱՆՈՒՄ

Պատմական հիշողությունը ազգային ինքնագիտակցության կարևորագույն բաղադրիչ է: Ազգային ինքնության և պատմական հիշողության միջև անխախտելի կապերի մասին խոսվում է վաղուց: Այս առումով հարկ է հիշատակել 19-րդ դ. երկրորդ կեսին ֆրանսիացի գրող, հրապարակախոս և փիլիսոփա Էրնեստ Բենամի կարծիքը. «Երկու բան են բնորոշում ազգին՝ մեկը վերաբերում է անցյալին, մյուսը՝ ներկային. մեկը՝ միասին ապրած անցյալի մասին հիշողությունն է, մյուսը՝ ներկայումս միասնաբար ապրելու ցանկությունը, կամքը՝ շարունակ արժեքավորելու ընդհանուր ժառանգությունը»<sup>1</sup>: Բենամի կարծիքով միասնական լինելու կամքը հիմնվում է նախևառաջ պատմական անցյալի ընդհանրության վրա, այլ կերպ ասած՝ պատմական հիշողության վրա: Այսպիսով, պատմական հիշողությունը ազգի գոյության պարտադիր պայման է, որևէ ազգ չի կարող գոյություն ունենալ առանց պատմական հիշողության:

Հասարակությունների պատմական հիշողության վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրություններ են կատարվել հատկապես Արևմտյան Եվրոպայում և ետպատերազմյան տասնամյակների ընթացքում: Մասնավորապես աչքի են ընկնում ֆրանսիական հեղինակների՝ Սորիս Յալբլաքսի և Պիեր Նորայի աշխատանքները: Ս. Յալբլաքսի աշխատանքներում նկարագրվում և վերլուծվում են հասարակության մեջ պատմական հիշողության ձևավորման, պահպանման և ձևափոխման մեխանիզմները<sup>2</sup>: Պ. Նորայի ղեկավարության տակ Ֆրանսիայի առաջատար պատմաբանները ձեռնարկել են մի բազմահատոր հիմնարար աշխատություն, որը նվիրված է այսպես կոչված «հիշողության տարածություններին» /lieux de mémoire/, այսինքն այն խորհրդանիշերին, որոնց միջոցով ֆրանսիական հասարակությունը հիշում է իր անցյալը<sup>3</sup>:

Ազգի պատմական հիշողությունը ձևավորվում է ազգի մաս կազմող անհատների և խմբերի /ինչպես օրինակ, ընտանիք, գյուղական և քաղաքային համայնք/ հիշողությունների հիման վրա: Պատմաբանները և ընդհանրապես մտավորականությունը այս անհատական և կոլեկտիվ հիշողությունները համակարգում են և տալիս դրանց որոշակի մեկնաբանություն, որի շնորհիվ ստեղծվում է պատմության որոշակի նարատիվ /«պատմաշար»/, որն իր տեղն է գրավում խմբի ինքնագիտակցության մեջ, մեզ հետաքրքրող դեպքում խոսքը գնում է ազգային ինքնության և ազգային պատմության նարատիվների մասին: Այսպիսին է ազգային պատմական հիշողության ձևավորման, եթե կարելի է օգտա-

գործել այս բանը «բնական» ուղին: Սակայն, միշտ չէ, որ պատմական հիշողությունը ձևավորվում է այս ճանապարհով՝ ներքևից վերև: Բազմաթիվ են դեպքերը, երբ որոշակի պատկերացումներ պատմության մասին ստեղծվում /հորինվում են/ պետական վերնախավի կամ մտավորականության որոշ շերտերի կողմից և այնուհետև կրթության համակարգի և քարոզչության միջոցով ներմուծվում են լայն հասարակության մեջ՝ հիմք դառնալով պատմության մասին անհատական պատկերացումների մասին:

Պատմական հիշողության խնդիրը հասարակության մեջ դառնում է առավել սուր, երբ այն ձևավորվում է վերը նկարագրված ճանապարհներից երկրորդով՝ վերևից ներքև: Այս գործընթացի մեջ հատուկ դեր են խաղում այն խմբերը, որոնք ունեն քաղաքական և մշակութային առումով տիրապետող դիրքեր՝ այսինքն քաղաքական վերնախավը և մտավորականները: Այս խմբերը միշտ չէ, որ շահագրգռված են ացնելի մասին օբյեկտիվ հիշողությունների գոյությամբ, արդյունքում փորձ է արվում խստորեն վերահսկել մշակութային հիշողության ձևավորումը: Այլ կերպ ասած, իշխող վերնախավը ձգտում է, որ հասարակությունը հիշի ոչ թե այն, ինչ տեղի է ունեցել, այլ այն ինչ ձեռնտու է հիշել վերնախավի տեսակետից:

Այդպիսի օրինակները, երբ քաղաքական էլիտան ձգտում է արհեստականորեն ձևափոխել հասարակության պատմական հիշողությունը բազմաթիվ են պատմության մեջ: Դեռևս եգիպտական փարավոնները ջնջում էին արձանագրություններից իրենց հակառակորդների անունները: ԽՍՀՄ-ում, որն անվանում էին «անկանխատեսելի անցյալով երկիր» քաղաքական վերնախավի միջամտությունը պատմական հիշողության ձևավորման և պահպանման գործընթացներին կրում էին համընդհանուր և ծայրահեղորեն կոպիտ բնույթ: Ահա այդպիսի գործընթացներ էին տեղի ունենում Խորհրդային Ադրեբջանում՝ կապված Լեռնային Ղարաբաղի, դարաբաղահայության և հայ-ադրեբջանական առնչությունների պատմության խնդիրների լուսաբանման հետ:

Այս մասին բավականին բավականին շատ է գրվել: Մեծ աշխատանք է կատարվել 1960-70-ականներից սկսած, երբ մի շարք պատմաբաններ, ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում ուշադրություն են դարձրել Ադրեբջանում «ազգային պատմության» ստեղծման փորձերին<sup>4</sup>: Այս աշխատություններ հեղինակները վերլուծում են պատմության մասին որոշակի պատկերացումներ արհեստականորեն ստեղծելու փորձերը և վեր են հանում դրանց քաղաքական ենթատեքստը: Մեր օրերում ևս կատարվում են որոշակի ուսումնասիրություններ այս ուղղությամբ: Այսպես, մոսկվացի ազգագրագետ Վ. Շնիրելմանը մի ամբողջ մենագրություն է նվիրել Հարավային Կովկասի ազգամիջյան հակամարտություններ մեջ՝ պատմագրության և պատմության մասին պատկերացումների խաղացած դերին<sup>5</sup>: Միևնույն խնդրի առանձին տեսանկյուններին անդրադարձել է նաև ամերիկահայ ուսումնասիրող Ս. Աստուրյանը, որն անդրադառնում է ադրբեջանցիների էթնոգենեզի մասին պատկերացումների ձևավորմանը ադրբե-

ջանական պատմագրության մեջ և վեր է հանում այդ պատկերացումների քաղաքական ենթատեքստը<sup>6</sup>: Աղրբեջանական պատմության կառուցման գործընթացին և նրանց «ինքնության փնտրտույթին» անդրադառնում է ամերիկյան ուսումնասիրող Շ. Հանթերը, որը մասնավորապես քնադատաբար վերլուծում է Իրանյան Աղրբեջանին նվիրված պատմական պատկերացումները և դրանց դերը աղրբեջանիցների ազգային ինքնության ձևավորման գործընթացներում<sup>7</sup>:

Խորհրդային տարիներին Աղրբեջանում տեղի էր ունենում ազգային ինքնության ձևավորման /կառուցման/ բուռն գործընթաց: Նոր ազգի ստեղծման գործընթացի կարևոր տարրերից էր այդ ազգի պատմական հիշողության ստեղծման գործընթացը: Ահա այդ նպատակը դրվեց աղրբեջանական պատմագիտության առջև, որը սկսեց ձևավորվել Աղրբեջանում 1930-40-ական թթ.: Աղրբեջանական պատմաբանները ձեռնամուխ եղան մի նախագծի, որը կարելի է բնորոշել իբրև քաղաքական նպատակներին ծառայող անցյալի մասին պատկերացումների ձևավորման գործընթաց: Անշուշտ, այդ գործընթացին մասնակցում էին ոչ միայն պատմաբանները, այլև աղրբեջանական մտավորականության լայն շրջանները, իսկ այդ գործընթացի հիմքում ընկած էր Աղրբեջանի գլուխ կանգնած պետականակցական վերնախավի քաղաքական կամքը:

Աղրբեջանի պատմության ստեղծման գործընթացին զարկ տրվեց, երբ 1936 թ-ին, Անդրֆեդերացիայի լուծարումից հետո, Աղրբեջանը դարձավ լիիրավ Խորհրդային հանրապետություն: Ինչպես գրում է մոսկվացի ուսումնասիրող Վ. Շնիրելմանը, «անհրաժեշտ դարձավ, որ Աղրբեջանն ունենա իր սեփական պատմությունը, որը թույլ կտա առանձնանալ, առաջինը՝ մնացած թուրքերից..., երկրորդը՝ շիթական Իրանից: Միևնույն ժամանակ... աղրբեջանցիներին անհրաժեշտ էր բնիկ ժողովրդի կարգավիճակը, բայց դրա համար նրանց անհրաժեշտ էր ապացուցել իրենց ավտոխտոն ծագումը»<sup>8</sup>: Այս տեսակետը գրեթե ամբողջովին համընկնում է ամերիկյան իրանագետ Շ. Հանթերի տեսակետին, որի կարծիքով պատմության ֆալսիֆիկացիան հետապնդում էր մի քանի նպատակներ՝ այդ թվում հիմք կառուցել նորաստեղծ ազգային հանրապետություններում կոլլեկտիվ ինքնության ձևավորման համար<sup>9</sup>: Անհրաժեշտ էր նաև աղրբեջանական ժողովրդին ապահովել հարուստ պատմական անցյալով և մշակութային ժառանգությամբ, որը թույլ կտար աղրբեջանցիներին «մրցակցել» իրենց հարևանների հետ: Կենտրոնական ղեկավարությունը ոչ միայն հանդուրժողական էր վերաբերվում այդ գործընթացին, այլև աջակցում էր Աղրբեջանի համար «արժանի» պատմական ացնյալի ստեղծման գործընթացին, այն չափով, որքանով այդ գործընթացը չէր ուղղվում ռուսների, Ռուսաստանի և ԽՍՀՄ-ի դեմ: Այս առումով բնորոշ է այն մետամորֆոզը, որն ապրեց այնպիսի մի վառ պատմական դեմք, ինչպիսին է Նիզամի Գյանջեվին: Ինչպես հայնտի է, Նիզամի Գյանջեվին գրել է պարսկերեն, նրա ստեղծագործությունները կազմում են պարսկերեն միջնադարյան գրականու-

թյան մաս: Ինչ վերաբերում է Նիզամիի էթնիկ ծագմանը, որևէ հիմքեր չկան՝ նրան վերագրելու թյուրքական էթնիկ ծագում, առավել ևս խոսելու նրա «ադրբեջանցի» լինելու մասին: Այնուամենայնիվ, Ադրբեջանական ԽՍՀ-ում 1938թ-ին մեծ շուքով նշվեց Նիզամիի 800-ամյակը՝ իբրև մեծ ադրբեջանական բանաստեղծի: Առավել հետաքրքիր է այն փաստը, որ 1939 թ-ին Մեծ Սովետական Հանրագիտարանում Նիզամին արդեն համարվում էր «ադրբեջանական մեծ բանաստեղծ», թեև Ռուսաստանում և ԽՍՀՄ-ում հրատարակված նախորդ բոլոր հանրագիտարաններում Նիզամին հիշատակվել է իբրև պարսկական բանաստեղծ<sup>10</sup>:

Ադրբեջանական նորաստեղծ ազգային պատմագրության առջև ևս մեկ կարևոր խնդիր էր դրվում. անհրաժեշտ էր ապացուցել, որ Խորհրդային Ադրբեջանի տարածքում ադրբեջանցիները բնիկ են, և որ ներկայիս Ադրբեջանի տարածքը ամբողջապես համապատասխանում է «ադրբեջանական պատմական տարածքներին»: Այս առումով հատկապես կարևոր էր ապացուցելը, որ Լեռնային Ղարաբաղը, ինչպես նաև Նախիջևանը, «պատմական ադրբեջանական» տարածքներ են: Այս խնդիրը լուծում էր ադրբեջանական պատմաբանների կողմից ստեղծված ադրբեջանցիների էնթոգենեզի «ալբանական տեսությունը»: Այդ տեսության քաղաքական ազդեցությունը հիմնվում է երկու կետի վրա: Կովկասյան Ալբանիան ունեցել է էթնիկապես միատարր բնակչություն՝ այսպես կոչված ալբանացիներ, որոնք այժմյան ադրբեջանցիների նախնիներն են: Կովկասյան Ալբանիան ընդգրկել է Կուրի աջ ափին գտնվող մարզերը, այդ թվում Լեռնային Ղարաբաղի տարածքը: Այդ երկու դրույթներն էլ գիտական տեսակետից առնվազն կասկածելի են և քննադատության են ենթարկվել ինչպես հայ, այնպես էլ օտար հեղինակների կողմից<sup>11</sup>: Այստեղ մեր խնդիրը չէ անդրադառնալ այդ բանավեժի պատմագիտական տեսանկյուններին: Կարևորը մեզ համար այն է, որ այդ տեսությունն ուներ շատ հստակ քաղաքական նկատառումներ: Եթե ալբանացիները ադրբեջանցիների նախնիներն են, իսկ Ղարաբաղը կազմել է Ալբանիայի մաս, ապա հիմք է առաջանում Ղարաբաղը ադրբեջանական տարածք համարելու համար:

Այնուամենայնիվ, հարց էր առաջանում. իսկ ի՞նչ անել Ղարաբաղի տարածքում ապրող հայերի հետ, ինչպես բացատրել նրանց գոյությունը ալբանական տեսության շրջանակներում: Մասամբ հարցը լուծվում էր նրանով, որ հայերը հայտարարվում էին նորեկներ, որոնք ժամանել են Ղարաբաղ միայն 19 դ-ում: Սակայն, այդ վարկածը միանշանակ ելք չէր. իսկ ի՞նչպես բացատրել հայկական հուշարձանների և արձանագրությունների առկայությունը և «ալբանացիների» որևէ հետքերի բացակայությունը Ղարաբաղում: Այդ խնդիրը «լուծեց» ադրբեջանական առավել ազդեցիկ պատմաբաններից մեկը՝ Զիյա Բունիյաթովը: Ադրբեջանական «ազգային պատմության» ստեղծման գործընթացը, իհարկե, չի կարելի կապել առանձին անունների հետ: Դա մի գործընթաց էր, որը պայմանավորված էր քաղաքական պայմաններով և ազգային ինքնության կառուցման օրինա-

չափություններով: Սակայն պետք չէ նաև թերագնահատել այն դերը, որ այս գործընթացում կատարել են առանձին անհատներ: Այդ առումով պատմաբան Ջիյա Բունիյաթովը առանձնանում է իր ազդեցությամբ աղբրեջանական ազգայնականության հիմնական միֆերի ձևավորման վրա:

Մինչև Բունիյաթով աղբրեջանական պատմաբանների գերակշռող մասն արդեն Կովկասյան Ալբանիան համարում էր Աղբրեջանի տարածքում գոյություն ունեցած պետություններից մեկը, իսկ ալբանացիներին ընդգրկում էր աղբրեջանցիների նախնիների ցանկի մեջ: Այնուամենայնիվ, այդ պատմաբանները ավելի մեծ ուշադրություն դարձնում էին Մարաստանին, Ատրպատականին և դրանց հաջորդած պետական կազմավորումներին: Փաստորեն, ավելի կարևոր էր համարվում էթնո-գենեզի մարաստրոպատենյան տարբերակը<sup>12</sup>:

Բրտիանացի պատմաբան Էրիք Յոքսբաումը գրում է, որ պատմաբաններն ազգայնականների համար նույնպիսի դեր են խաղում, ինչպես Պակիստանում կակաչ աճեցնողները հերոյին օգտագործողների համար՝ ապահովում են շուկան կարևորագույն հումքով<sup>13</sup>: Ջ. Բունիյաթովի կենսագրությունը կարծես ապացուցում է Յոքսբաումի այդ պնդման արդարացիությունը<sup>14</sup>: Բունիյաթովը մասնակցել է Բեռլինի գրավմանը և անգամ արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման: 1945-46 թթ. ծառայել է խորհրդային բանակում Գերմանիայի տարածքում, հետագայում տեղափոխվել է պահեստազոր: Ծառայությունն ավարտելուց հետո, թերևս իր մարտական անցյալի շնորհիվ, նա ընդունվում է Մոսկվայի Արևելագիտության Ինստիտուտ, որն ավարտելով ընդունվում է ասպիրանտուրա՝ հայտնի խորհրդային արևելագետ Ե. Ա. Բելյանկի ղեկավարությամբ, և պաշտպանում է թեկնածուական թեզը 1954 թ.-ին: Նրա թեզը նվիրված էր Իտալիայի իմպերիալիստական քաղաքականությանը Աֆրիկայում: Միայն Բաքու վերադառնալուց հետո, ելնելով տեղի պատմաբանների առջև դրված քաղաքական հրամայականներից, Բունիյաթովը «վերաորակավորվում է» ինն և միջին դարերի շրջանի մասնագետի: Միջնադարագետի մասնագիտական կրթության բացակայությունը մասամբ կարող է բացատրել Բունիյաթովի մեթոդների առանձնահատկությունները: Ընդհանրապես նման «վերաորակավորումները» հազվադեպ չէին աղբրեջանական պատմաբանների շրջանում: Այսպես, Սուլեյման Ալիյարովը, որը առաջ է քաշել աղբրեջանցիների էթնոգենեզի իր տեսությունը, եղել է 19 դ. Բաքվի նավթարդյունաբերության պատմության մասնագետ և հետո միայն սկսել է զբաղվել իր պատմության և լեզվաբանության խնդիրներով, հասկանալի է, առանց դրա համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և հմտությունների<sup>15</sup>:

Մոսկվայում ատենախոսությունը պաշտպանելուց հետո Բունիյաթովը վերադառնում է Բաքու և սկսում է աշխատել Աղբրեջանական ԽՍՀ ԳԱ Պատմության Ինստիտուտում: Երբ 1964 թ.-ին Բաքվում ստեղծվում է Սերժավոր և Հառավոր Արևելքի Ժողովրդների Ռեսուրսափրության ինստի-

տուտը Բուճիյաթովը տեղափոխվում է այնտեղ, 1981 թ-ին նշանակվում է ինստիտուտի տնօրեն: 1967-ին նա դառնում է Ադրբեջանի ԳԱ թղթակից-անդամ, իսկ 1976-ին ակադեմիկոս: Բուճիյաթովի հատուկ դիրքը ադրբեջանական հասարակագետների շրջանում ամրապնդվում է, երբ 1980 թ-ին նա ստանում է Ադրբեջանական պետական մրցանակ «Ադրբեջանի աթաբեկների պետությունը» աշխատության համար<sup>16</sup>: Սա վկայում է այն մասին, որ Ադրբեջանի իշխանությունները հովանավորում էին Բուճիյաթովին և նրա գիտական գործունեությունը: Ճիշտ է, 1971 թ-ին Ադրբեջանի Կոմունիստական Կուսակցության առաջին քարտուղար Գ. Ալիեվը քննադատեց Բուճիյաթովին և մի քանի պատմաբանների (Ս. Իսմայիլով, Ս. Ալիյարով) թույլ տված սխալների՝ մասնավորապես կուսակցական գծից հեռանալու մեջ<sup>17</sup>: Սակայն, այս քննադատությանը չհետևեց ոչ մի վարչական գործողություն, Բուճիյաթովը ոչ միայն պահպանեց իր պաշտոնն ու կոչումները, այլև հետագա տարիներին շարունակեց իր փայլուն առաջընթացը դեպի Ադրբեջանի գիտական բարձունքները: Այս հանգամանքը թույլ է տալիս ուսումնասիրողներին ենթադրել, որ Ալիեվը ոչ թե արտահայտում էր սեփական կարծիքը, այլ ստիպված էր այդ քայլն անել կենտրոնական իշխանությունների ճնշման տակ, մինչդեռ իրականում Բուճիյաթովը և մյուսները գործում էին իշխանությունների բարոյական աջակցության պայմաններում: Գ. Ալիեվի և Ջ. Բուճիյաթովի ջերմ հարաբերությունները պահպանվեցին նաև խորհրդային կայսրության փլուզումից հետո, Ադրբեջանի անկախության շրջանում: Բուճիյաթովը դարձավ ալիեվյան «Նոր Ադրբեջան» կուսակցության հիմնադիրներից և ակտիվ անդամներից մեկը: 1997թ. Բուճիյաթովին դանակահարեցին, նրա սպանությունը մինչ այժմ բացահայտված չէ:

1965 թ.-ին Ջ. Բուճիյաթովը հրատարակեց մի գիրք «Ադրբեջանը 7-9դդ.» խորագրով, որը միանգամից առաջ բերեց պատմաբանների հիացմունքը Ադրբեջանում և սուր քննադատությունը՝ Ադրբեջանից դուրս<sup>18</sup>: Այս գրքում նա առաջ քաշեց այն տեսությունը, որ միջնադարում հայերը ծուլման են ենթարկել ալբանացիներին, ստիպելով նրանց ընդունել հայերեն լեզուն, ոչնչացնելով նրանց մշակութային արժեքները: Բնական է, որ այս տեսությունը չէր կարող հիմնավորված լինելով որևէ հավաստի պատմական վկայություններով, սակայն դա, ըստ երևույթին, կարևոր չէր ոչ տեսության հեղինակի, ոչ էլ նրա հետևորդների համար: Կարևորն այն էր, որ Ջ. Բուճիյաթովի տեսությունը լիովին համապատասխանում էր հայ փոքրամասնության համդեպ Բաքվի քաղաքականությունը: Դարաբաղդ-ցիները ծուլված ալբանացիներ են, այսինքն ադրբեջանացիներ և նրանք պետք է վերադարձան իրենց «ադրբեջանական» արժատներին: Իսկ ադրբեջանցիները, ըստ այդ «տեսության», իբրև ալբանացիների հետնորդներ և ժառանգներ ունեն լիակատար պատմական իրավունք Դարաբաղի հանդեպ: Բուճիյաթովի պատկերացումների համաձայն Կովկասյան Ալբանիան ձգվում էր Սևանա լճից մինչև Կասպից ծով՝ այսինքն ընդգրկում էր ոչ

միայն Լեռնային Ղարաբաղը, այլև Հայկական ԽՍՀ զգալի մասը: Թագավորության բնակչությունն ըստ Բունիյաթովի իրենից ներկայացնում էր միատարր եթնոս՝ ալբանական ժողովուրդ /«народность»/: Ընդ որում, ալբանացիներն ու ադրբեջանցիները, ըստ Բունիյաթովի «ըստ էության նույն ժողովուրդն են»<sup>19</sup>: Այս պնդումն առավել հետքքրոր է քանի որ, չնայած Բունիյաթովի կարծիքով, ալբանացիները խոսում էին ալբաներեն և քրիստոնյա էին, հեղինակը նրանց նույնացնում է թյուրքախոս և մահմեդական ադրբեջանցիների հետ: Քանի որ Բունիյաթովը նկարագրում էր, թե ինչ ժողովուրդ էր ապրում Կովկասյան Ալբանիայի մշակույթը, մասնավորապես գիրն ու գրականությունը, տրամաբանական հարց էր առաջանում. ի՞նչու, եթե ալբանական մշակույթն իրոք այդչափ զարգացած էր, այդ մշակույթից գրեթե ոչինչ չի հասել մինչև մեր օրերը: Այս հարցին պատասխանելու համար Բունիյաթովը կառուցում է իր տեսությունը ալբանացիների ստիպողական ծուլման մասին: Ըստ Բունիյաթովի, ալբանացիները դարերով ենթարկվել են հայերի կողմից ճնշումների և ծուլողական քաղաքականության: Այդ ծուլողական քաղաքականության զագաթնակետն, ըստ Բունիյաթովի, այն էր, որ հայկական եկեղեցին, արաբական խալիֆաթի աջակցությամբ, ոչնչացրել է ողջ ալբանական գիրն ու գրականությունը, ընդ որում ոչնչացվելուց առաջ դրանք թարգմանվել են հայերեն<sup>20</sup>:

Բունիյաթովի պատմագրական մեթոդների մասին որոշակի պատկերացում տալու համար անդրադառնանք հետևյալ փաստին. 19խս ք-ին նա հրատարակեց երկու հոդվածներ՝ «Կովկասյան Ալբանիայի» մասին, որոնք գրեթե ամբողջապես արտագրված էին արևմտյան երկու հեղինակների աշխատանքներից /Th. De Waal, 2004/: Իհարկե, Բունիյաթովը որոշ «ուղղումներ» էր կատարել հոդվածների՝ անգլերենից թարգմանված տեքստերում՝ համապատասխանեցնելով դրանք իր պատմագրական տեսություններին: Բունիյաթովին հիմնավորապես մեղադրել են նաև պատմական աղբյուրները հրատարակելիս՝ դրանց տեքստը ձևափոխելու մեջ: Այս առումով բերենք մի օրինակ, որը հայկական մամուլում լուսաբանել էր պատմաբան Պ. Մուրադյանը<sup>21</sup>: 1984 ք-ին Բաքվում հրատարակվեց 14րդ դ. վերջի 15րդ դ. սկզբի գերմանացի ճանապարհորդ Շիլբերգերի «Ճանապարհորդությունը»՝ Զ. Բունիյաթովի խմագրությամբ: Այս հրատարակությունը հիմնվում էր 1866 ք-ին կատարված ռուսերեն թարգմանության վրա, որի հեղինակն էր Ֆ. Բրունը: Նախաբանում Զ. Բունիյաթովը նշում էր, որ նա կրճատել է «Ճանապարհորդության այն հատվածները, որոնցում գերակշռում են սխուլաստիկ բնույթի անվերջ դատողություններ, շատ է կաթոլիկ եկեղեցու հասցեին գովերգությունը»: Նման «յուրօրինակ» մոտեցումը պատմական սկզբնաղբյուրին հայ պատմաբանների շրջանում լուրջ կասկածներ առաջացրեց Զ. Բունիյաթովի գիտական բարեխղճության վերաբերյալ: Պ. Մուրադյանը, համեմատելով Զ. Բունիյաթովի հրատարակությունը, Ֆ. Բրունի 1866 ք. տեքստի հետ, ցույց տվեց, որ կրճատվել էին ոչ թե «սխուլաստիկ բնույթի անվերջ դատողությունները», այլ այն

տեղեկությունները, որոնք վերաբերում էին հայերին և Հայաստանին, իսկ որոշ դեպքերում քրիստոնյաներին ընդհանրապես<sup>22</sup>:

Չնայած գիտական տեսակետից Բուճիյաթովի տեսություններն, մեղմ ասած, անհիմն էին, դրանք Ադրբեջանում ստացան լայն տարածում և իշխանությունների աջակցությունը: Ճիշտ է, զուտ ձևականորեն դրանք քննադատվեցին հանրապետության ղեկավարության կողմից, այնուամենայնիվ ընդհանուր առմամբ Բուճիյաթովը և նրա աշակերտները ստանում էին ադրբեջանական քաղաքական վերնախավի աջակցությունը<sup>23</sup>: Ինչ վերաբերում է համախորհրդային մակարդակին, ապա այստեղ ևս, թեև Բուճիյաթովը և նրա դպրոցը քննադատվեցին գիտնականների կողմից, սակայն նրանց գիտական մոդելների քաղաքական ենթատեքստը գրեթե անտեսվեց: Բուճիյաթովի տեսությունները համապատասխանում էին ոչ միայն ադրբեջանական ղեկավարության շահերին, այլև Մոսկվայի՝ Ադրբեջանի հանդեպ իրականացվող քաղաքական գծին: Ինչպես նշել ենք, Ադրբեջանի նկատմամբ իր քաղաքականության մեջ Մոսկվան ձգտում էր թուլացնել ադրբեջանցիների իսլամական և թյուրքական ինքնությունը և զարգացնել բուն ադրբեջանական ինքնություն, որը նրանց դուրս կղներ թե իսլամական թե թյուրքական աշխարհից /տես վերևում/: Բուճիյաթովի տեսությունը շատ հարմար էր այս առումով, քանի որ այն շեշտում էր, թե ալբանացիները ոչ թե պարզապես ադրբեջանցիների մախնիներից մեկն են, այլ որ ադրբեջանցիները ալբանացիների անմիջական հետնորդներն են: Պատահական չէ, որ այս պայմաններում Բուճիյաթովի տեսությունները շորունակեցին զարգանալ Ադրբեջանում և Բուճիյաթովի, կարելի է ասել, դարձավ մի ամբողջ պատմագրական դպրոցի հիմնադիր:

Ձիյա Բուճիյաթովին հետևեցին մի շարք հեղինակներ, որոնք կիսում էին թե նրա մեթոդաբանական մոտեցումները և թե հիմնական նպատակները՝ ստեղծել ադրբեջանական ազգին անհրաժեշտ փառահեղ անցյալը, և այդ անցյալից ջնջել հայերի հետքերը: Բուճիյաթովի հետևորդների աշխատանքներից, արդեն խորհրդային վերջին տարիներին, առավել մեծ աղմուկ հանեց և առավել շատ հակասություններ առաջ բերեցին Ֆարիդա Մամեդովայի գրվածքները<sup>24</sup>: Ֆ. Մամեդովան պնդում էր, թե Կովկասյան Ալբանիան եղել է անկախ պետություն, սկսած մ.թ.ա. 3րդ –ից մինչև մ.թ. 8րդ դ.: Ավելին, ըստ Ամեդովայի, «ալբանական պետականությունը» պահպանվում էր Սյունիքում և Արցախում մինչև 14րդ, իսկ Ղարաբաղում մինչև 18րդ դար: Նույն տրամաբանությամբ, Մամեդովան համարում էր, որ «ալբանական» եկեղեցին անկախ է եղել հայկական եկեղեցուց, և, իբրև այդպիսին, պահպանվել է մինչև 1836 թ.: Մամեդովան ավելի հեռու գնաց, քան իր նախորդները՝ հակադրելով պետականություն ունեցող ալբանացիներին և պետականություն չունեցող հայերին: Ըստ նրա, մ.թ. ա. 1 դ–ից մինչև մ.թ. 5 րդ դ. Ալբանիան եղել է անկախ պետություն, մինչդեռ Հայաստանը չի կարելի այդպիսին համարել, քանի եր այն գտնվում էր սկզբից Հռոմի և Պարթևների, իսկ ապա՝ Բյուզանդիայի և



Պարսկաստանի ազդեցության տակ: Մամեդովայի տեսակետների համաձայն Ղարաբաղի և Սյունիքի բնակչությունը հին և միջին դարերի ընթացքում եղել է ալբանական, և նրա «հայկականացման» գործընթացը սկսվել է միայն 10րդ դարում: Ալբանացիները, ըստ Մամեդովայի, ունեցել են հարուստ մշակույթ, որի ներկայացուցիչների թվում նա նշում է Մովսես Կաղանկատվացուն, Մխիթար Գոշին և Կիրակոս Գանձակեցուն: Ըստ Մամեդովայի՝ ալբանական գիրը ստեղծվել է դեռևս քրիստոնեությունից առաջ, իսկ Մետրոպ Մաշտոցը իրականում ոչ թե ստեղծել է այլ ձևափոխել է ալբանական գրերը<sup>25</sup>:

Մամեդովայի աշխատանքը, և այն հանգամանքը, որ Մամեդովան այդ աշխատանքի համար Բաքվում արժանացավ պատմական գիտությունների դոկտորի աստիճանի, բուռն բողոք առաջացրեց հայ պատմաբանների շրջանում: Մի շարք աշխատանքներ հրատարակվեցին, որոնք բացահայտում էին Մամեդովայի տեսական կառույցների սնանկությունը և նրա մեթոդների հակազիտական բնույթը, ինչպես նաև նրա հետևությունների քաղաքական ենթատեքստը<sup>26</sup>:

Ձ. Բունիյաթովը և Ֆ. Մամեդովան միակը չէին ադրբեջանական պատմաբանների շարքերում, որոնք մասնակցում էին Ադրբեջանի «փառավոր անցյալի» կերտմանը: Սեր անդրադարձը այս հեղինակներին պայմանավորված է նրանով, որ հենց նրանց «ստեղծագործությունը» առավել լայն քաղաքական անդրադարձ ստացավ և զգալի չափով դարձավ անցյալի մասին պատկերացումների հիմքը այսօրվա անկախ Ադրբեջա: Այնուամենայնիվ, Բունիյաթովը և Մամեդովան քիչ են տարբերվում ժամանակակից մի շարք ադրբեջանական պատմաբաններից իրենց աշխատանքների մեթոդաբանությամբ և քաղաքական ենթատեքստով: Ավելին, Բունիյաթովի և Մամեդովայի կարծիքները Ադրբեջանի անցյալի վերաբերյալ թվում են բավականին չափավոր և անզամ գիտական՝ համեմատած նրանց մի շարք գործընկերների հայացքների հետ: Այս աշխատանքներից շատերն ունեն մարգինալ բնույթ, իսկ նրանցում տեղ գտած գիտական տեսություններ ընդհանրապես ավելի շատ հիշեցնում են գիտա-ֆանտաստիկ գրականություն: Այսպես, Դ. Ախունդովը, որն, ի դեպ, մասնագիտությամբ ճարտարապետ էր, շարունակելով զարգացնել «ալբանական» տեսությունը, եկավ այն եզրակացության, որ Ալբանիայի մայրաքաղաքը գտնվել է այժմյան Բաքվի տեղում, որ Ալբանիան եղել է համաշխարհային քաղաքակրթության հնագույն օրրաններից մեկը, իսկ Ավեստայում հիշատակվող «արիացիների հայրենիքը»՝ Արյանա Վաջ, որ այլ ինչ է, քան Ապշերոնյան թերակղզին<sup>27</sup>:

- <sup>1</sup> J. Hutchinson and A. Smith. Nationalism Reader. Oxford University Press, 1994; էջ 18-19:
- <sup>2</sup> M. Halbwachs, On Collective Memory. Chicago, University of Chicago Press, 1992.
- <sup>3</sup> P. Nora. (under the direction of). Realms of Memory: Rethinking the French Past. Volume 1, Conflicts and Divisions. Columbia University Press, 1996.
- <sup>4</sup> Աշխարհի աղբյուրների մասին. А. Мнацаканян, П. Севак. По Поводу Книги З. Бунятова "Азербайджан в 7-9 вв."// Историко-Филологический Журнал, 1967, N 1, с. 177-190; А. Мнацаканян. О литературе Кавказской Албании. Ереван, 1969; А. Акопян, П. Мурадян, К. Юзбашян. К Изучению Истории Кавказской Албании. Историко-Филологический Журнал, 1987, N 3, с.166-189; Б.А. Арутюнян. Когда отсутствует научная добросовестность. Вестник Общественных Наук Армянской ССР, 1987, N 4, с.33-56; А. Акопян, П. Мурадян, К. Юзбашян. К Изучению Истории Кавказской Албании (о книге Ф. Мамедовой "Политическая История и Историческая География Кавказской Албании(III в. до н.э. – VIII в. н.э.)"). // П. Мурадян. История – Память Поколений: Проблемы Истории Нагорного Карабаха. Ереван, Айастан, 1990; R. Hewsen, "Ethno-history and the Armenian Influence Upon the Caucasian Albanians" in Samuelian, Thomas (ed). Classical Armenian Culture : Influences and Creativity. Chico: Scholars Press, 1982:
- <sup>5</sup> V. Shnirelman. The Value of the Past: Myths. Identity and Politics in Transcaucasia. Osaka, 2001.
- <sup>6</sup> S. Astourian, "In Search of Their Forefathers: National Identity and the Historiography and Politics of Armenian and Azerbaijani Ethnogeneses." In "Nationalism and History: the Politics of Nation Building in Post-Soviet Armenia, Azerbaijan and Georgia". Toronto: 1994.
- <sup>7</sup> Sh. Hunter, "Azerbaijan: Searching for a New Identity and New Neighbors". in Ian Bremmer and Ray Taras (ed) "New States New Politics: Building the Post-Soviet Nations" Cambridge: Cambridge University Press, 1997; Sh. Hunter. Greater Azerbaijan: Myth or Reality?//Le Caucase Postsoviétique: La Transition Dans le Conflit. Sous la direction de Mohammed-Reza Djallili. Bruxelles-Paris, 1995.
- <sup>8</sup> V. Shnirelman, նշվ. աշխ.; էջ 103:
- <sup>9</sup> Sh. Hunter. Greater Azerbaijan: Myth or Reality?, էջ 118-119:
- <sup>10</sup> V. Shnirelman, նշվ. աշխ. էջ 103-104:
- <sup>11</sup> Բանավեճի լուսարանումը արտասահմանյան հեղինակի, տես՝ R. Hewsen, նշվ. աշխ.:
- <sup>12</sup> Ավելի մանրամասն տես՝ S. Astourian, նշվ. աշխ.; V. Shnirelman, նշվ. աշխ.:
- <sup>13</sup> Э. Хобсбаум. Принцип Этнической Принадлежности и Национализм в Современной Европе. В кн. Наши и Национализм. Москва, 2002; էջ 332:
- <sup>14</sup> Բունդիստիկ կենսագրության մասին մասին տես՝ V. Shnirelman. նշվ. աշխ., էջ 120-122; Y. Kamy, Highlanders: a Journey to the Caucasus in Quest of Memory. New York: Farrar, Strauss and Giroux, 2000, էջ 374-377:
- <sup>15</sup> V. Shnirelman, նշվ. աշխ., էջ 130:
- <sup>16</sup> Այն տեղում, էջ 121:
- <sup>17</sup> Այն տեղում, էջ 122:
- <sup>18</sup> З. Бунятов. Азербайджан в 7-9 вв. Баку, Изд. Академии Наук АзССР, 1965.
- <sup>19</sup> Այն տեղում, էջ 93:
- <sup>20</sup> Այն տեղում, էջ 97-100:
- <sup>21</sup> П. Мурадян, История – память поколений; էջ 121 -127:
- <sup>22</sup> Այն տեղում, էջ 125
- <sup>23</sup> V. Shnirelman, նշվ. աշխ. էջ 122:
- <sup>24</sup> Ф. Мамедова. "Политическая История и Историческая География Кавказской Албании (III в. до н.э. – VIII в. н.э.)". Баку, 1986.
- <sup>25</sup> Այն տեղում, 1986 էջ 5-7:
- <sup>26</sup> Տես՝ ծանոթագրություն N 5:
- <sup>27</sup> V. Shnirelman, նշվ. աշխ., էջ 125: